ԱՆՆԱ ՓՈԽՍՐԱՐՅԱՆ

ՀԱՅ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԵԿԴՈՏՆԵՐԻ ՍԵՄԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1990-ական թթ. ի վեր հայ հասարակության առօրյա իրականության սահմաններում ժողովրդի և իշխանությունների միջև ծավալվող քննախոսությունը ենթարկվել է զգալի փոփոխությունների: Վերջին տասնյոթ տարիների ընթացքում Հայաստանի սոցիալ-քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձությունները նպաստեցին քաղաքական մշակույթի նկարագրի փոփոխմանը: Գաղափարախոսական կողմնորոշումների ոլորտում տեղի ունեցած փոփոխությունների ազդեցության պայմաններում հասարակական-քաղաքական մտածողությունը դուրս եկավ սոցիալիստական գաղափարախոսության սահմաններից՝ տեղափոխվելով մտահայեցողական այլ հարթություն: Պաշտոնական և ոչ պաշտոնական արգելքների թիվն էականորեն նվազեց տարբեր, այդ թվում՝ ժողովրդական հումորի ոլորտում: Նմանօրինակ փոփոխությունները, նախ և առաջ, անդրադարձան քաղաքական հումորի վրա: Ավելի քան յոթանասուն տարի սոցիալիստական արգելքների պայմաններում դրսևորվելուց հետո քաղաքական հումորը հնարավորություն ստացավ իր ողջ բազմազանությամբ բացահայտորեն արծագանքել սոցիալ-քաղաքական կյանքում տեղի ունեցող կտրուկ փոփոխություններին: Քաղաքական հումորի սահմաններում տեղի ունեցող նշված փոփոխություններն առավելագույնս արտահայտվում են քաղաքական անեկդոտներում, որոնք հանդես են գալիս ինտերսուբյեկտիվ կենսաշխարհի սահմաններում քաղաքական իրականության առօրյականացված և տիպականացված երևույթներն արտապատկերող յուրահատուկ «հայելու» դերում՝ անեկդոտի իրականությունը կամրջելով առասպելական իրականության հետ և ըստ այդմ՝ զգալի արդիականություն հաղորդելով քաղաքական անեկդոտների և առասպելների միջև հարաբերակցության սոցիոլոգիական ուսումնասիրությանը:

Քաղաքական անեկդոտների առասպելամիֆաստային տարածությունը

Շուրջ 365 քաղաքական անեկդոտների տեքստերի վերլուծությունը*

* Հետազոտությունն իրականացվել է քաղաքական անեկդոտների տեքստերի դիսկուրս-վերլուծության միջոցով՝ հետազոտական երկու քայլերով՝ կոնտենտ վերլուծություն և կառուցվածքային–սեմիոլոգիական վերլուծություն:

ցույց է տալիս, որ քաղաքական անեկդոտների իմաստային տարածությունը բաղկացած է «Ընտրություններ» (42%), «Հայաստանի զարգացման հեռանկարներ» (30%) և «Ներիշխանական հարաբերություններ» (28%) թեմատիկ ուղղվածությունները բովանդակող դաշտերից: «Ընտրություններ» թեմատիկ խմբի անեկդոտների իմաստային տարածությունը հավակնում է հանդես գալ իբրև ընտրակեղծիքների անխուսափելիության և ընտրակաշառքների որպես «հակառակորդի» ոչ լեգետիմ գործողությունները հակակշռելու անհրաժեշտության համակցությամբ ձևավորվող ժողովրդավարական ընտրությունների կայացման անհնարինության առասպելական տարածություն, որտեղ ծավալվող ցանկացած իրադարձություն մեկնաբանվում է նշված երեք բևեռների մշտական փոխպայմանավորվածության ներքո:

Մի անգամ ագռավը մի կտոր պանիր է գտնում, թռնում, նստում է ծառի ճյուղին և սկսում է սպասել: Մոտենում է աղվեսն ու հարցնում.

-Ագռավ, ագռավ, Քոչարյանի՞ն ես ընտրելու: Ագռավը լռում է:

-Ագռավ, ագռավ, Քոչարյանի՞ն ես ընտրելու: Ագռավը շարունակում է լռել:

-Ագռավ, ագռավ, Քոչարյանի՞ն ես ընտրելու:

-Այո,-պատասխանում է ագռավը: Պանիրն ընկնում է, աղվեսը վերցնում է այն և փախչում:

Նստած է ագռավը ծառին ու մտածում է՝ «Ենթադրենք, թե ասեի՝ «ոչ», ի՞նչ էր դրանից փոխվելու»:

Անեկդոտի վերլուծությունը թույլ է տալիս խոսել ոչ թե երևույթի (այս դեպքում՝ ընտրությունների) առասպելականացման, այլ առասպելի առասպելականացման մասին: Հայաստանում «արդար ընտրությունների» կայացման անհնարինության կարծրացած պատկերացումների հիման վրա ժողովրդավարական ընտրությունները՝ որպես քաղաքական իրականության երևույթ, ենթարկվում են երկմակարդակ առասպելականացման, որի մտածողության մատրիցայում իրադարձությունները կառուցակցվում և անեկդոտում ներկայացվում են հետևյալ հաջորդականությամբ: Անսպասելիություն՝ անեկդոտի ներածության մեջ ներկայացված «*<u>մի անգամ</u> ագռավը պանիր է գտնում...*» լեզվական մետամոդելը շեշտադրում է հետխորհրդային անոմիկ շրջանում հասարակական-քաղաքական կյանքում ընտրական տեխնոլոգիաներն անսպասելիորեն ներդրելու հանգամանքը: Արժեքի չգիտակցվածություն-անգործություն՝ «*...նստում է ծառի ճյուղին և <u>սպասում</u>*» մետամոդելը վկայում է այն մասին, որ առօրյա գիտակցության մեջ ժողովրդավարական ընտրությունների ֆենոմենը նույնացվում է անսպասելի, թանկարժեք, հավանաբար նաև երկար սպասված ձեռքբերման հետ, որի իրական արժեքը դեռևս չի գիտակցվում: Խաբեություն՝ վերջինս դրսևորվում է վերոնշյալ անեկդոտում իրադարձությունների զարգացումներում, որոնք ի հայտ են բերում անեկդոտի երկրորդ հերոսին՝ իշխանություններին: Իշխանությունները պատահականորեն չեն ներկայացված աղվեսի հերոսի միջոցով. աղվեսն ավանդաբար համարվում է խորամանկության

խորհրդանիշը, ինչն անեկդոտում՝ որպես նշանակելի, վերագրվում է սոցիալական ընկալումներում «բացարձակ թշնամու» առասպելը մարմնավորող հերոսին: Պարտության անխուսափելիություն՝ այս գաղափարը դրսևորվում է անեկդոտի հանգուցալուծման մեջ, որտեղ ագռավի մտորումներն արտացոլում են առօրյա գիտակցության սահմաններում ընտրությունների նկատմամբ ձևավորված տիպային պատկերացումների ողջ էությունը: Եվ, վերջապես, առասպելի ամբողջականությունն արտահայտվում է անեկդոտի հանգուցալուծման մեջ ներկայացվող *«...նստած է ագռավը ծառին և մտածում է»* մետամոդելում. հասարակությունը իրեն ներկայացնում է պասիվ, լռակյաց զանգվածի դերում, որը գիտակցելով իրավիճակի անարդարացիությունը, առաջնորդվում է «իշխանությունների ամենազորության» միֆոլոգեմից բխող մտածողության մատրիցայով՝ մտորումների մակարդակից չանցնելով ակտիվ գործողությունների:

«Ժողովրդավարական ընտրությունների կայացման անհնարինության առասպելը» «հարվածի առանցքը» ուղղում է ոչ միայն դեպի իշխանութեունները, այլև դեպի ինքնին ժողովուրդը: Ընտրակեղծիքների երևույթի բազում քննադատությունների կողքին ներկայացված են այնպիսի անեկդոտներ, որտեղ նշված գործընթացում անմիջական մասնակցություն ունի ընտարզանգվածը, և որտեղ իրավիճակի ողջ անհեթեթությունը, թերևս, ընկալվում և մեկնաբանվում է որպես ինքնըստինքյան, առօրյա և անփոփոխ իրականություն: Վերջինս վկայում է այն մասին, որ հասարակությունը, ընդհանուր առմամբ, ոչ այնքան *համակերպվել*, որքան *հարմարվել է* ստեղծված իրավիճակին և մշակել է գոյատևման մի շարք մեխանիզմներ՝ ի շահ իր կենսական կարիքների բավարարմանը, և ի վնաս ժողովրդավարական ընտրությունների կայացմանը:

Ընտրություններից հետո պարտված թեկնածուն հարցնում է հավաքվածներից մեկին:

-Օրինակ դուք, ինչու՞ չեք քվեարկել իմ օգտին: Ե՞ս չեմ ձեր աղջկան աշխատանքի տեղավորել, ե՞ս չեմ ձեր տղային բանակից ազատել, ե՞ս չեմ ձեր հոր համար անհատական թոշակ նշանակել:

-Այդ ամենի հետ համաձայն եմ: Բայց, ասացեք, ի՞նչ եք դուք արել անձամբ ինձ համար:

Հանդուրժողականության և անտարբերության միջոցով դիստանցավորվելով «ընտրական իրականությունից»՝ հասարակությունն իրեն տեղայնացնում է մարգինալ պայմաններում՝ թե՛ մասնակցելով քննադատվող գործողություններին, թե՛ վերացարկվելով դրանցից՝ իրագործվածի պատասխանատվությունը տեղափոխելով սեփական դիտանկյունից՝ «պդտոր» քաղաքական իրականություն: Հետևաբար, խոսքը կարող է գնալ ինտերսուբյեկտիվ առօրյականության սահմաններում «ընտրակեղծիքների» և «ընտրակաշառքների» միֆոլեգեմները սինթեզելու և այդպիսով իսկ՝ իրականության այս

հատվածում հասարակական պատասխանատվությունն առավելագույնս նվազեցնելու միտվածության մասին:

Ներիշխանական հարաբերությունները ներկայացվող անեկդոտները ծավալվում են «անձնական հարաբերությունների միջոցով քաղաքական հարցերը լուծելու» միֆոլոգեմի, հետևաբար՝ «անձի առասպելի» իմաստային սահմաններում: Եթե ընտրություններին նվիրված անեկդոտների իմաստային տարածությունը կառուցակցվում է ընտրական գործընթացին վերագրվող նշանակությունների համախմբության միջոցով, ապա այն ամենը, ինչ կատարվում է իշխանության ներսում, դիտվում է ոչ թե գործընթացի էության, այլ անձերի միջև հարաբերությունների կտրվածքով: Քաղաքական անձնավորման երևույթը հասարակական ընկալումների տեսանկյունից քաղաքական իրականության պարզեցման, առօրեականացման և տիպականացման ամենաարդյունավետ մեխանիզմներից մեկն է: Տեղեկատվական սահմանափակության և ինտերսուբյեկտիվ առօրեականության սահմաններում քաղաքական կյանքի այս կտրվածի մեկնաբանման համար անհրաժեշտ գիտելիքի բացակայության պայմաններում հասարակական գիտակցությունը փորձում է տիպային կերպարների միջոցով «այստեղ և այժմ» սահմաններում ինտեգրել իրականության այն հատվածը, որն ընկալվում է որպես անմեկնաբանելի:

Հայաստանի ապագան շոշափող անեկդոտները գտնվում են հայ ազգի «վերակենդանացման» հնարավորությունների գերառասպելականացված տարածության մեջ: Հայ ազգի յուրահատկության գաղափարը կառուցակցվում է ազգային ինքնառեֆլեքսիան և հետերոռեֆլեքսիան հակադրելու, օտարի աչքերում սեփական անհաջողությունները քողարկելու, թերություններն առավելությունների վերածելու և վերջինիներիս միջոցով «բարոյական հաղթանակի» հասնելու ունակության իրոնիկ արտացոլման հենքի վրա: Ունենալով դարավոր պատմական անցյալ, հարուստ մշակույթ, կրելով առաջին քրիստոնեա ազգի տիտղոսը՝ հայերն իրենց դասում են ընտրյալ ազգերի շարքին: Այս կարգավիճակի պահպանման անհնարինության գիտակցումն ու արդի աշխարհից օտարվածության զգացումը դրսևորվում է նաև հումորի աշխարհում՝ հանդես գալով այնպիսի արտահայտությունների միջոցով, ինչպիսիք են *«Հայաստանում թռչնագրիպ չկա, որովհետև մենք տարածաշրջանի բոլոր պրոյեկտներից դուրս ենք մնացել»* կամ *«Այնտեղ, որտեղ վերջանում է ասֆալտը՝ սկսվում է Հայաստանը»*: Նմանատիպ անեկդոտներում որպես երկրորդական հերոս հանդես է գալիս Աստծո կերպարը, ինչը «ընտրյալ ազգի առասպելը» կառուցակցում է էսխատոլոգիական հիմքերի տեսանկյունից: Ուստի, առօրյա գիտակցության մեջ հայ ազգի երբեմնի համբավի դիցաբանական վերադարձը կապվում է թաքնված, գախտնուսական ուժերի ազդեցության հետ՝ ևս մեկ

անգամ խիստ նվազեցնելով գործընթացում հասարակական մասնակցության աստիճանը: Պատահական չէ, որ այս թեմայով անեկդոտներն առավելագույնս ծավալվում են սեմանտիկ հակադրության աբստրահարվածության բարձրագույն մակարդակում՝ վկայելով այն մասին, որ հասարակական գիտակցությունը ևս աբսրահարվում է ներկա իրականությունից՝ ապագայի իր հեռանկարը փնտրելով տարածաժամանակային այլ՝ դիցաբանական հարթությունում: Թեմատիկ առումով լինելով միակ անեկդոտները, որտեղ իրադարձությունները կառուցվում են ներկայից ապագա ուղղվածությամբ, այս դեպքում իրադարձությունների տեղափոխումը դիցաբանական կործանման և վերածնման շրջան փաստում է այն մասին, որ առնվազն անեկդոտային-ֆանտաստիկ իրականությունում հայ ազգի «վերածնունդը» ընկալվում է որպես անիրականանալի:

Քաղաքական անեկդոտների հերոսները «յուրային-օտար» իմաստային հակադրության բևեռներում

Քաղաքական անեկդոտը՝ որպես տեքստ, կառուցված է ինտերսուբյեկտիվ իրականության «յուրային-օտար» տարանջատման շուրջ, որն ուրվագծում է «ժողովուրդ» և «իշխանություն» դաշտերի սեմանտիկ հակադրության երկու բևեռները՝ յուրաքանչյուրում հանդես եկող անեկդոտի հերոսների դերակատարման միջոցով: Ենթատեքստային հակադրության ստորին՝ կենցաղային մակարդակն առնչվում է ընտրական գործընթացների հետ, որտեղ ներկայացված են քաղաքականությունն առօրեականացնող (Անդրանիկ Մարգարյան), առօրյան քաղաքականացնող (Տիգրան Կարապետյան) և մշտական-թեկնածուական կարգավիճակում գտնվող (պատգամավոր) անեկդոտային հերոսները: Թեև պատգամավորի որպես հակահերոսի կերպարը միանշանակ կոնցեպտուալ բնույթ ունի, այնուհանդերձ այս հերոսի բացառիկ նշանակությունը նրանում է, որ նրա դերակատարմամբ անեկդոտները կազմում են ժողովրդի՝ իբրև ակտիվ հերոսի ներկայությունն ապահովող միակ իմաստային տարածությունը: Եթե Ա. Մարգարյանի և Տ. Կարապետյանի պարագայում «ժողովրդական հերոսները» թեև հայտվում են անեկդոտային ներկայացման առաջին պլանում, սակայն գտնվում են պասիվ հերոսի կարգավիճակում, ապա պատգամավորական գործունեությունը ծաղրող իրականության մեջ իշխանության ներկայացուցիչների նկատմամբ «սոցիալական վախը» գրեթե ամբողջովին հաղթահարված է:

Մի խուլ գյուղում պատգամավորների թեկնածուներով ավտոբուսը վթարի է ենթարկվում: Գյուղացիներից մեկը պատահաբար տեսնում է, մեծ հոր է փորում և բոլորին թաղում այնտեղ: Որոշ ժամանակ անց գալիս են լրագրողները և հարցնում, թե ուր են մարդիկ: Գյուղացին պատասխանում է, որ բոլորին հանձնել է հողին:

«Բոլորը մահացե՞լ են»,-զարմանում են լրագրողները:
«Չէ, մի քանիսն ասում էին, որ կենդանի են, բայց, դե, գիտեք, թե դրանք ոնց են ստում»,- պատասխանում է գյուղացին:

«Պատգամավորի թեկնածուին» «յուրային» տարածություն տեղափոխելու համար հասարակական գիտակցությունն օգտագործում է քաղաքական անեկդոտների համար տիպական դարձած հավասարեցման հնարքը՝ արտացոլելով պատգամավորի կերպարի շուրջ կառուցակցված «մշտական թեկնածուի» առասպելը: Վերջինիս տրամաբանության համաձայն պատգամավորի թեկնածուն չի ընկալվում որպես «մենք» այնքանով, որքանով հավակնում է վերածվել պոտենցիալ իշխանության կրողի, սակայն, առասպելականացված թեկնածուական կարգավիճակը ոչ միայն թույլ է տալիս նրան և ժողովրդին տեղայնացնել հավասար պայմաններում, այլև ձևավորել ժողովրդից պատգամավորի թեկնածուի առասպելականացված կախվածություն: Այլ կերպ ասած՝ քանի դեռ «թեկնածու ես» (խոսքը գնում է միայն պատգամավորի կերպարի մասին), ստիպված ես լսել ժողովրդի պահանջները: Այս առասպելը հանդիսանում է պատգամավորին նվիրված քաղաքական անեկդոտների կառուցման առաջնային հիմքերից մեկը:

Աբստրահարման միջին մակարդակը, այսինքն՝ իրական քաղաքական իրադարձությունների և անձնավորված քաղաքական գործիչներին ներկայացնող իմաստային տարածությունը վերաբերում է ներիշխանական հարաբերություններին, որտեղ ներկայացված հերոսներն առավել մոտ են «օտար» բևեռին: Հետևաբար, որքան բարձր է այս կամ այն քաղաքական գործչի քաղաքական գործունեության վերաբերյալ տեղակացվածության մակարդակը, այնքան ժողովուրդն ավելի է հակված նրա կերպարը մեկնաբանել «հակահերոսի առասպելի» շրջանակներում:

Աբստրահարման բարձրագույն մակարդակում ծավալվում են Հայաստանի ապագային նվիրված անեկդոտների շարքը՝ նախագահի գերառասպելականացված կերպարի մասնակցությամբ: Հետևաբար, որքան ապագան անորոշ է, ներկան՝ ոչ հստակ, տեղակցվածության մակադակը՝ ցածր, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ իրականության սոցիալական մեկնաբանման մեխանիզմները կտեղափոխվեն այնկողմնային աշխարհ:

Քաղաքական անեկդոտն այն բացառիկ վիրտուալ իրականությունն է, որտեղ հասարակությանը ընձեռնվում է ոչ միայն իշխանությունների հետ «հաշվեհարդար տեսնելու», այլև սեփական դիտանկյունից՝ «ժողովուրդ-իշխանություն» դիսկուրսի նախընտրելի տարբերակը ներկայացնելու հնարավորություն, որից, սակայն, այն հակված չէ օգտվել: Իշխանությունների առաջին պլանի (62%), անձնավորված (37% (62%-ից)) և ակտիվ (40% (62%-ից))

հերոսներին հակադրվում են ժողովրդի մեծամասամբ երկրորդ պլանի (60%), անդեմ (32% (40%-ից)) և պասիվ (29% (40%-ից)) անեկդոտային հերոսները՝ նույնիսկ անեկդոտային՝ արգելքներից վեր գտնվող աշխարհում ընդգծելով հասարակական գիտակցության մեջ արմատացած իշխանությունների գործողությունների վրա ժողովրդի ազդեցության հնարավորությունների բացակայության միֆոլոգեմը: Անեկդոտների միակ, ընդ որում՝ երկչափ առասպելականացված հերոսը, որի մասնակցության դեպքում ժողովուրդը հակված է հաղթահարել իմաստային հակադրության սահմանը և անցնել «նրանք» տարածություն, նախագահն է: Այն հանգամանքը, որ նախագահի անեկդոտները ծավալվում են աբստրահարման բարձրարգույն մակարդակում, արդեն իսկ վկայում է հնտերսուբյեկտիվ առօրյականության սահմաններում անեկդոտային իրականության մոդելավորման ընթացքում, նախագահի վերանձնային-կոնցեպտուալ քաղաքական կերպարին անձնային հատկանիշները ստորադասելու միտվածության մասին: Ավելին, նախագահի մասնակցությամբ անեկդոտներում Աստծո որպես երկրորդական հերոսի, ներգրավվածությունը փաստում է, որ նախագահական իշխանությունն ընկալվում է որպես իշխանության վերին դրսևորում, որը, այս պարագայում, անկախ է այն կրող քաղաքական գործչից: Այս ամենի հիման վրա կարելի է պնդել, որ նախագահի կերպարն ունի ընդգծված սիմվոլիկ բնույթ, որը բավականին «արգասաբեր է» նրա շուրջ քաղաքական առասպելների ձևավորման տեսանկյունից: Հետևաբար, խոսքը կարող է գնալ ոչ թե ՀՀ նախագահ և Ռոբերտ Քոչարյան, այլ նախագահ Քոչարյան և Քոչարյան-նախագահ հերոսների մասին. մի դեպքում մենք գործ ունենք նախագահի առասպելի հետ, որը դուրս է գտնվում ժամանակային հատվածականությունից, մյուս դեպքում՝ Քոչարյանի որպես քաղաքական գործչի շուրջ ձևավորված առասպելների հետ: Ժողովուրդը նախընտրում է իշխանության հետ հաղորդակցվել վերացական, ոչ անձնավորված նախագահի կերպարի հետ: Այստեղ ընդգծվում է հայ հասարակության առօրյա իրականության սահմաններում առասպելականացված մտածողության գերակայությունը. հասարակությունը ձգտում է հաղորդակցվել այնկողմնային իրականության դիցաբանական հերոսների և սրբազան կերպարների հետ՝ վերացարկվելով գոյության ներկա ձևից և փնտրելով փրկության իր ուղին դիցաբանական աշխարհում: Գերառասպելականացված տարածության մեջ գործող և նմանատիպ բնութագրություն ունեցող իշխանության հերոսի հետ քաղաքական հաղորդակցությունն հաստատելու հասարակական միտվածությունը վկայում է «նախագահի առասպելի» համընդգրկուն բնույթի մասին, ինչի արդյունքում ժողովրդի և նախագահի միջև ընկած տարածության մասնակիցների քաղաքական դերը նվազեցվում է՝ նրանց վերագրելով «ժողովուրդ-նախագահ»

առասպելականացված քննախոսության ֆոնային-իմաստային տարածությունն ապահովելու գործառույթը:

Որպես դիցաբանական-անեկդոտային տարածության իմաստային երանգավորումների ուսումնասիրության ամփոփում՝ ներկայացնենք ինքնին իշխանության անեկդոտային կերպարը, որն անեկդոտներում ներկայանում է նաև առանձին հերոսի տեսքով: Իշխանությունների շուրջ կառուցակցված «բացարձակ թշնամու» առասպելը բավականին ակնառու կերպով դրսևորվում է ստորև ներկայացվող անեկդոտում, որտեղ իշխանության անցանակալի գործունեության ծավալները հիպերբոլիզացվում են՝ դրանց ազդեցությունը տեղափոխելով անգամ այնկողմային աշխարհ:

Մի մարդ մեռնում է, տեսնում է թունել, թունելի վերջում՝ լույս: Սկսում է գնալ դեպի լույսը, երբ հանկարծ թունելի այս ծայրից ձայն է լսվում՝ «էս ու՞ր, դու դեռ էս լույսի համար չես վճարել»:

«Օտար» իմաստային տարածության մեջ միևնույն ժամանակ անդեմ դիցաբանական թշնամի-իշխանությունների և այդ նույն իշխանությունների ներկայացուցիչներին մարմնավորող հերոսների ներկայությունը վկայում է այն մասին, որ ինքնընստինքյան առօրեականության մեջ հետզհետև ուրվագծվում է իշխանության կոնցեպտուալ թշնամու կերպարի և պետական-քաղաքական գործիչների կոնտեքստուալ «նրանք-ընկալումների» միջև տարանջատում անցկացնելու միտումը: Սակայն, անեկդոտների «օտար» տարածության մեջ հակազդեցության իրական, անձնավորված և միասնական կերպարի բացակայությունը հանգեցնում է ոչ թե «ժողովուրդ-իշխանություն» կառուցողական դիսկուրսի հաստատմանը, այլ ուղղորդված «հակազդեցության գործողությունների» և «մենք» տարածության մեջ դրանք ներկայացնող ակտիվ և անձնավորված հերոսների բացակայությանը, երբ իշխանությունների հետ հաղորդակցվելու անհրաժեշտությունն անգամ կասկածի տակ է դրվում և ներկայիս «ոչ լավ, ոչ վատ», «ոչ բարենպաստ, ոչ անբարենպաստ», «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակները հայտվում է պահպանողական ձգտումների կենտրոնում: Քանի դեռ հասարակական գիտակցության մեջ գոյություն չունի փոփոխության այն ուղենիշը, երկրի զարգացման այն առասպելական կերպարը, որը կարող է «ոչ.., ոչ...» անորոշ բնութագրությունը բերել որոշակի ձևակերպման, հասարակությունը կշարունակի պահպանել անտարբեր, հանդուրժողական և անգործության իր ռազմավարությունները սեփական քաղաքական ապագան կերտելու գործում: